Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՈՍԿԻ ՁԿՆԻԿ

Թարգ. Պուշկինից

ԿԱՄՍԱՐ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑԸ

Հրատարակություն Զարմայր Տէր-Դաւթեանցի

ՈՍԿԻ ՁԿՆԻԿ

(Պուշկինից)



Թարգմանեց

ԿԱՄՍԱՐ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑԸ

2294

ԹԻՖԼԻՍ

Տպար. Վրաց Հրատ. Ընկ. || Тип. Груз. Изд. Т—ва.

Большая Ванкская ул.

1903

Дозволено цензурою. Тифлисъ, 26-го марта 1903 года.

ԼՍԻՀ. ՊԵՏ. ԳՐԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԹԻՖԼԻՍԻ

4746

(Թարգմանութիւն Պուշկինից)

Ա.

Մի ծերունի մարդ և իւր պառաւ կին,
Հանդիստ ու խաղաղ բնակւում էին
Դրեսուներեք տարի միասին,
Մի հին դեռնատան, մեծ ծովի ափին։
Ծերը ուռկանով միշտ ձուկն էր բռնում,
Իւր պառաւ կինն էլ բրթից թել մանում։

Մի անգամ ծերը ծովն ուռկան ձգեց,
Ուռկանն ջրից միայն տիղմ հանեց.
Նա երկրորդ անգամ ուռկան ձգեց ծով,
Դուրս եկաւ ուռկանն ծովային խոտով։
Իսկ երրորդ անգամ, երբ ուռկան ձգեց,
Մի ոսկի ձկնիկ նա ծովից հանեց։

Ոսկի ձկնիկը խնդրել սկսեց,
Մարդկային լեզուով ծերին աղաչեց.
«Թող ինձ, ով ծերուկ, որ ծովը գնամ,
Իմ փոխարէն քեզ մեծ փրկանք կը տամ.

Ինչ սիրտդ ուզի, երբ որ կամենաս,
Թանկագին դրաւ ինձնից կ'ստանաս»։
Ծերը զարմացաւ, սաստիկ սարսափեց,
Երբ ձուկն մարդու պէս խօսել սկսեց։
Երեսուներեք տարի ձկնորս էր,
Բնաւ չէր լսած, որ ձուկը խօսէր։
Թողեց ծերուկը այն ոսկի ձկան,
Այս քաղցր խօսքը ասելով նորան.
«Ոսկի դու ձկնիկ, գնա, Տէր ընդ քեզ,
Քո ազատութեան գինը պէտք չէ մեզ.
Գնա քեզ համար դու այդ կապոյտ ծով,
Եւ այնտեղ ազատ լողա ապահով»։

Բ.

Տուն դարձաւ, պատմեց ձկնորս ծերունին
Այս մեծ հրաշքը նա իւր պառաւին.
«Այսօր բռնեցի մի ոսկի ձկնիկ,
Ձուկը խօսում էր, ինչպէս մենք, մարդիկ.
Խնդրեց բաց թողնել իրան կապոյտ ծով,
Թանկագին փրկանք ինձ խոստանալով։
Փրկանք պահանջել չը համարձակուեցայ,
Ուրեմն թողեցի, որ ծովը գնայ։

Գառաւը ծերին շատ յանդիմանեց,
Սաստիկ բարկացաւ, յիշոցներ տուեց.
«Ցիմար, պարզամիտ, ա՛յ դու անասուն,

Առանց փրկանքի ինչու եկար տուն.
Նորանից գոնէ նոր տաշտ խնդրէիր,
Մերը կոտրած է,—մի՞թէ չ'գիտէիր»։
Կապոյտ ծովի մօտ ծերուկը գնաց.
Տեսնում է ծովը հանդարտ ծըփծըփաց։
Ոսկի ձկնիկին կանչել սկսեց.
Ձուկը լողալով՝ եկաւ հարցրեց.

«Ի՞նչ ես կամենում, ով ալևոր ծեր».
Ծերը ողջունեց. պատասխանն այս էր.
«Ողորմիր ինձի, թագուհի ձկնիկ,
Նախատում է ինձ իմ պառաւ կնիկ.
Ինձ, խեղճ ծերունուս, հանգիստ չէ թող-
նում,
Իւր համար մի նոր նա տաշտ է ուզում.
Մերը կոտրած է, էլ չէ պէտքական,
Բայց այդպէս մնալ չուզէ մէկ վայր-
կեան»։
«Դու մի վշտանար, ասաց ձկնիկը,
Այսօր կունենայ նոր տաշտ քո կնիկը»։

Գ.

Իւր պառաւի մօտ ծերունին դարձաւ,
Մէկ նոր տաշտ նորա առաջը տեսաւ.
Բայց կինն աւելի սկսեց նախատել,
Ծեր մարդու գլխին անէծքներ թափել։
«Ծերուկ, դու անխելք, պարզամիտ յիմար
Ի՞նչ շահ դորանից, որ տաշտ ստացար.

Տաշտն ինչ մեծ վարձ է, ձկան մօտ դարձիր,
Ողջոյն տուր նորան, մի խրճիթ ուզիր»։
Ահա նա դէպի կապոյտ ծով գնաց,
(Կապուտակ ծովն էր փոքր ինչ պղտորուած)
Սկսեց կանչել ոսկի ձկնիկին.
Եկաւ ձկնիկը, հարցրեց ծերուկին.
«Ի՞նչ ես կամենում, ով ալեոր ծեր»։
Ծերը ողջունեց. պատասխանն այս էր.
«Ողորմիր ինձի, թագուհի ձկնիկ,
Նախատում է ինձ իմ պառաւ կնիկ.
Ինձ խեղճ ծերունուս հանգիստ չէ թողնում,
Կատղած պառաւս խրճիթ է ուզում»։
«Տէր ընդ քեզ, գնա, ասաց ձկնիկը.
Այսօր կունենայ խրճիթ քո կնիկը»։
Ծերունին գնաց կրկին գետնատուն,
Բայց նորա տեղը տեսաւ մի լաւ տուն.
Իր հին գետնատան հետքն էլ չէ գտնում.
Մեծ զարմանքիցը աչքին չէ հաւատում։
Տեսաւ առջևը մի տուն պատուական,
Տանիքի վերայ ճերմակ ծխահան.

Աղիւսից շինած սպիտակ պատեր,
Ու կաղնեայ փայտից տաշած մեծ դռներ։



Պատուհանի տակ պառաւը նստած,
Հայհոյեց մարդուն և յետոյ ասաց.
«Անշնորհ ծերուկ, խրճիթ խնդրեցիր,
Այդ չընչին բանը մեծ բաղդ կարծեցիր։
Գնա դէպի ծով, գլուխ տուր ձկան,
Ու յայտնիր նորան այս իմ հրաման.
Չեմ ուզում ճնալ ապտոտ շինական,
Ուզում եմ լինել հին ազնուական»։

Դ.

Ահա նա դէպի կապոյտ ծով գնաց,
(Բայց կապոյտ ծովը շատ էր պղտորուած)
Սկսեց կանչել ոսկի ձկնիկին,
Եկաւ ձկնիկը հարցրեց ծերուկին.
«Ի՞նչ ես կամենում, ով ալևոր ծեր»։
Ծերը ողջունեց. պատասխանն այս էր.
«Ողորմիր վերաս, թագուհի ձկնիկ,
Խիստ է կատաղել իմ բաւթաւ կնիկ.
Ինձ, խեղճ ծերունուս հանգիստ չէ թողնում,
Եւ գեղջուկ մնալ էլ նա չէ ուզում.
Չէ ուզում մնալ աղտոտ շինական,
Ուզում է լինել հին աղնուական։
«Ցէր ընդ քեզ, գնա, ասաց ձկնիկը,
Աղնուական է այժմ քո կնիկը»։
Ծերունին դարձաւ պառաւի մօտ տուն,
Եւ ի՞նչ է տեսնում. բարձր վերնատուն.
Պատշգամբի մօտ պառաւը կանգնած՝
Ինչպէս մի խաթուն, զուգուած, զար-
դարուած։

Սամոյր բաճկոնակ ունէր նա հագին,
Գլխին դիպակէ գլխարկ թանկագին.
Մարգարիտներով վիզը զարդարուած,
Ոսկի մատանիք մատներին շարած։
Ոտներին ունէր կարմիր կօշիկներ,
Եւ իւր առաջին հլու ծառաներ.
Պառաւը նոցա սաստում, ծեծում էր,
Մազերից բռնում ու քաշքշում էր։
Ծերը յարգանքով ասաց իւր կնկան.
«Ողջոյն, տիրուհի, հին աղնուական,
Կարծեմ, որ այժմ գոհ ես, իմ աստղիկ»։
Բղաւեց վերան իւր պառաւ կնիկ,
Եւ հրամայեց, որ գոմում մնայ,
Այնտեղ ծառայէ և իւր մօտ չը գայ։

Ե.

Մի քանի շաբաթ հաղիւ անցկացաւ,
Պառաւ տիկինը կրկին կատեցաւ.
Կրկին ձկան մօտ ղրկեց ծերուկին,
«Շուտով դու կերթաս, ասում է մարդին.
Կողջունես նրան, կասես դու ձկան.
Չէ ուզում մնալ հին աղնուական,

Կամ մի հասարակ, լոկ իշխանուհի,
Այլ կամենում է լինել թագուհի»։
Երբ այս խօսքերը լսեց ծերունին,
Դողաց ու ասաց նա իւր պառաւին.
«Խպառ գժուել ես, ա՛յ իմ չար պառաւ,
Գլխիս դարձել ես մի ճշմարիտ ցաւ.
Դէմքիդ, շարժուածքիդ մի՞թէ չես նայում,
Որ թագուհի էլ ես լինել դու ուզում։
Դէ՛, բաւական է, այ ագահ բաւթառ,
Կը ծիծաղեցնես դու բոլոր աշխարհ»։
Աւելի վատթար պառաւը կատղեց,
Մի ամուր ապտակ ծերուկին զարկեց.
«Ի՞նչպէս ես կարող, յանդուգն յիմար,
Իմ պէս տիկնոջ հետ վիճել կոպտաբար.
Քեզ հրամայում եմ գնալ դէպի ծով,
Թէ կը դիմադրես կերթաս ծեծուելով»։
Դէպի կապոյտ ծովը ծերունին գնաց,
(Ցեսաւ կապոյտ ծովն արդէն սևացած)
Սկսեց կանչել ոսկեայ ձկնիկին.
Եկաւ ձկնիկը, հարցրեց ծերուկին.
«Ի՞նչ ես կամենում, ո՛վ ալևոր ծեր.
Ծերը ողջունեց. պատասխանն այս էր.
«Պառաւ կնիկս էլի է կռւում,
Հին աղնուական մնալ չի ուզում.

Չէ լսում բնաւ ուրիշի խրատ,
Ուզում է լինել թագուհի ազատ»։
«Տէր ընդ քեզ, գնա՛, ասաց ձկնիկը,
Ազատ թագուհի դարձաւ քո կնիկը»։

Զ.

Ծերը պառաւի մօտ վերադարձաւ,
Առջևն արքունիք, պալատներ տեսաւ.
Տեսաւ իւր կնկան ճաշի վրայ նստած.
Այդ պալատներում թագուհի բազմած։
Իշխանք, աղնիւներ թագուհու համար
Պատուական գինի ածում անդադար։
Սեղանի առջևը պառաւն էր նստել,
Վերան հաղար մի կերակուր դարսել.
Պառաւն ուտում էր շատ անուշեղէն,
Անծանօթ բաներ և խմորեղէն։
Զորս կողմում կանգնած խիստ պահապաններ,
Ուսերին բռնած շատ սուր տապարներ։
Երբ տեսաւ ծերը, սաստիկ սարսափեց,
Ոտքերն ընկնելով նորան ողջունեց,
«Ողջոյն քեզ, ողջոյն, ո՛վ ահեղ դշխոյ,
Խոմբաւական ես քո կեանքից և դոհ...»։
Պառաւը ծերի վրան չը նայեց,

Միայն պալատից քըշել հրամայեց.
Իշխանք, աղնիւներ շտապով վազեցին.
Ծերին ծեծելով դուրս վռնդեցին։
Դռնապաններն էլ կանգնած տան շեմքին,
Քիչ մնաց կացնով, որ սպանէին։
Իսկ ժողովուրդը ծիծաղեց վրան.
«Այդ քո պատիժն է, անմիտ, անպիտան,
Թող այս քեզ լինի նոր դաս և խրատ,
Որ չ՝յանդգնես ցանել կտաւատ»։

Է.

Մի քանի շաբաթ հազիւ անցկացաւ,
Պառաւ թագուհին խպառ կատղեցաւ.
Նա հրամայեց իւր իշխաններին,
Գտնել և բերել շուտ իւր ամուսնին։
Գտան ծերուկին, նորա մօտ տարան.
Կնիկը գոռաց և ասաց նորան.
«Դնա դէպի ծով, գլուխ տուր ձկան,
Ու յայտնիր նորան իմ այս հրաման.
Չեմ ուզում մնալ ազատ թագուհի,
Ուզում եմ դառնալ ծովի տիրուհի։
Ովկիան ծովերում ուզում եմ ապրել,
Ոսկի ձկնիկին ինձ ծառայ բռնել»։

Չը համարձակուեց ծերը ձայն հանել,
Կամ մէկ հակառակ խօսք նորան ասել։
Դէպի կապոյտ ծով ծերունին գնաց,
Տեսնում է ծովին սև մրրիկ պատած.
Ալիքներն ուռչում, սար էին դառնում,
Ահեղ փոթորիկն գոչում էր, գոռում։
Սկսեց կանչել ոսկի ձկնիկին,
Զուկը մօտ լողաց, հարցրեց ծերուկին.
«Ի՞նչ ես կամենում, ով ալեոր ծեր»,
Ծերը ողջունեց, սիրտն էր անհամբեր.
«Ողորմիր ինձի, թագուհի ձկնիկ,
Հանգիստ չի տալիս ինձ իմ չար կնիկ.
Չէ ուզում մնալ ազատ թագուհի,
Ուզում է դառնալ ծովի տիրուհի.
Ովկիան ծովերում ուզում է ապրել,
Քեզ էլ ծառայի մի պաշտօն յանձել»։
Ձկնիկը ծերին չը պատասխանեց.
Իւր պոչով ջրին նա կամաց խփեց,
Ու գնաց ծովի խորքում թագ կացաւ,
Եւ այնուհետև էլ չերևեցաւ։
Երկար սպասեց ծերուկը նորան,
Բայց ոսկի ձկնիկը չտուեց պատասխան։

Գլխակոր դարձաւ պառաւի մօտ տուն,
Տեսաւ առաջին դարձեալ գետնատուն.



Եւ իր պառաւը շեմքումը նստած,
Իսկ նորա առաջ կոտրած տաշտն ընկած։

1878 թ. Թիֆլիս։

Գրկ. թ. Այս հէքիաթը հայերէն լեզուով առաջին անգամ թարգմանել է Կամառար Տէր-Դաւթեան ը։

Հրատ.

ԱՍԻԱ-ՊԵՏ ԳՐԱԴԱՐԱՆ ԹԸՆԳՈՒՐԱՆԻ

ԳԱԹ
№ 22

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ԿԱՄՍԱՐ ՏԷՐ-ԳԱՒԻԹԵԱՆՑԻ

1) ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ, հատոր Ա. (սպառվ.) 90 կ.
2) » » » Բ. (սակաւաք.) 80 »
3) ԱՄԵՐԻԿԱՑԻ ՊԱՌԼԷՑԻ ԶՐՈՑՑՆԵՐԸ Եւրոպայի, Ասիայի, Աֆրիկայի եւ Ամերիկայի մասին (սակաւաքիւ) . . . . 40 »
4) РУССКОЕ СЛОВО, Դասագիրք ռուսերէն լեզուի, տասնեւմէկերորդ տպագրութիւն (սպառված) . . . . . 45 »
5) ՀՈԳԵՓՈԽՈՒԹԻՒՆ կամ ԿԱԽԱՐԴՈՒԱԾ ՊՐԻՆՑ (սակաւաքիւ) . . . 20 »
6) ԾՈՅԻ ԵՐԳԱՐԱՆ երկրորդ տպագր. . 40 »
7) ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ (պատկերազարդ) 25 »
8) ՈՍԿԻ ԶԿՆԻԿ (պատկերազարդ) . . 10 »

Դիմել՝ Тифлисъ, Центральная Книжная Торговля.
„ Книжн. маг. „Гуттенбергъ“.
„ Кавказск. Книжн. торговля.
Կամ հեղինակին՝ Тифлисъ, 5 участокъ, ограда Армян. церкви во имя св. Георгія.

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

Դումարով գնողներին 20% *զիջում.*